Արդ Թագաւոր Արքայ՝ որ կանդնէ զաչխարհ, ըստ իմաստնոյն իրաւի՝ ի յարդարութիւնս և ի լոզորմութիւնս հաստատուն գոլով Աթոռ Ամենաբարեպաշտ և ինքնակալ Մենի կայսերս մերոյ յատկեղ խնամակալին՝ հանուրց քրիստոնէից և մանաւանդ ազգիս Հայոց, սորին մեծութիւն՝ ոչ ՚թէ միմիայն զարգարատութեան իւր զլոյս փայլել բարձրացուս այլ և՝ յատկապէս ունի ամենահզօր բազկաւն իւրով՝ կալնուլ զտկար բազկաց, Սրբազնակատար հայրապետին մերոյ Տեառն Դանիէլի և բազմեցուցանել ի կաթուղիկոսարանն Սուրբ Էջմիածնի. որ անմ կողմանցն Թիֆլիզու Կուսակալ պայծառ քնիազ՝ Պաւլ Դիմիտրիչ Ցիցիանովէն առաքեցեալ դեսպանքն՝ գոլով ՚ներեան առ խանն, յուսամք մինչ ցարդ՝ ամենաբարձր հրամանն Ամենաողորմ կայսերն մերոյ ի փառաւոր կատարման իցէ։

Իսկ Դրիզոր սեակիրն՝ որ ի քնէ մինչ ցարդ, պատճառ խռովութեան էր ընդհանուր ազգիս մերոյ. և գոլով անդեղջ ի չարիս տակաւին եւս ոչ վերջանալը ի կողմնապահութենէ ասորւոցն Դաւթի, վասն որոյ ի յարդարատատ ամենաողորմ կայսրէս մերմէ, ոչ ՚թէ միմիայն սաստեցեալ եղեւ բարձրագոյն հրովարտակօք (որոյ կօպիայն վաղ ուրեմն հասեալ է ձեզ)՝ այլ և անդառնալի երկրորդական հրամանաւ նոյն Դրիզոր սեակիրն՝ ի փետրվարի 26 բարձաւ ի քաղքէս. որ պարտի գալ Նօվօրօսիայ. անդ լռութեամբ նստիլ և զամենայն հաչիւն հին և նոր կալից հանդուցեալ Պատրիարգին Ցովսէփայ տալ սրբազան առաջնորդին մերոյ Եփրեմայ արք եպիսկոպոսին, որ բոլորովին այժմ գա՝ զիչխանութենէ դորին է կալեալ։

Արդ մեք՝ ըստ որում զանազան գրութեամբք ի մերաղնէից Ռուսաստանու ի սոյն ամենաճչմարիտ գործառութիւն. վէքիլ և վոխանորդ կարգեցաք, պարտիմք որքան կենդանի եմք ըստ ազգասիրական պարտաւորութեամբ մերով՝ միշտ հոգալ զբարի գրութենէ մերազնէից։ Քանզի՝ լաւ գիտէք ազգն մեր որ ի հնոիկս և ՚թէ աստ ի Ռուսաստան. զքազմագումար արդիւնս. զորս սերմանեցին ի ձեռս հանդուցեալ Պատրիարգին Ցովսէփայ ոչ ՚թէ պնուռ գիտմամբն եւ տուն, եթէ զկնի վախճանի նորին կեր և կուչ լինիցի ի չարահնար սեակրէ ումեմէ, այլ վասն բարեդրութեան ուսումնարանաց և տպարանին հաւն. որպէս և յառաջ քան զայս ի ձերդ հասարակութենէ զրուածոն՝ սակս սոյն հաչուապահանչռութեան և այլ զանազանց, բոլորն ուռասերէն թարգմանութեամբ՝ մատուցեալ է սրբազան Առաջնորդս մեր Պայծառափայլ զրաի Վլիսոր Պաւլիչ Կուչուբէյն. ուրեմն՝ և պատուելութեան ձեր արժան է, համեմատ զրուածոց ձերոց՝ չնորհակալութեամբ զդալ զչանս Սրբազան Առաջնորդին մերոյ և ձեր. որ ոչ ՚թէ վասն անձին իւրոյ՝ այլ վասն մանկանց ձերոց՝ և սակս բարեդրութեան ձեր ունի ցաւիլ և հոգալ. ՚թէ վասն է այնքան գումար դրամոյն ի կորուստ լինիցի. զի այս չերմեռանդութիւն ոչ ՚թէ միայն բանիւ ունի յայտնել ձեզ. այլ և գործով իակ ցուցանէ որպէս ահա երեւի յայտնի նչանն որ զեռ զառաչնորդական գործոյն իւր զձաչակն ոչ զղացեալ, ամապարեաց տալ բերել ի Պօլսոյ գվարժապետսն. որք այժմ են ի Նախիջեւան։ Ուրեմն որքան զղալի պարտին լինել որ սա վասն մանկանց ձերոց լուսաւորութեան՝ այնքան փոյթ և ջանս ունիցի, և մեք ազգաս ոչ գտանիցաք սմա օգնական. ահա երկարօրէնն ի զրուածոց սրբազան հօրն մերոյ դիտելոց է.ք. և համառօտ մեք զայս ունիմք ասել ՚թէ Թարց լմնի մեք զայս ունիմք ասել ՚թէ Թարց լմնի կասկածանաց և երկբայութենան. զամենք կասկածանաց և երկբայութենան. զամենայն խնդիր ձեր ի կողմանէ զրամոյն, որ ի Հնդկաց, վաղ ուրեմն պատրաստ ունելով ի ժամ հաչուախնդրութեան՝ որ ի Դրիզոր սեակրէն, այնց ամենից պահանջումն լինիցի։

Նորին Բարձր Գերազանցութիւն՝ Սէրպէ Անդրէիչ Բէքլէչովն ըստ որում վօլնի գութեռնատր կողմանցդ դիմաց յայդր. և մեզ չնորհնական գոլով՝ վասն հասարակութեան օգտին ձերոյ ունիմք յանձնարարութիւնս չերմեռանդ սրտացաւութեամբ։

1802 ապրիլ

---

**ԿԼ.** *Կոնդակ Դանիէլ կաթուղիկոսի առ Շնորհ Մկրտիչ եւ Մարտիրոս աղայս։*

Ցիսուսի Քրիստոսի ծառայ տէր Դանիէլ և չնորհիւ նորին Կաթուղիկոս և ծայրագոյն պատրիարք ամենայն Հայոց Առաքելական եկեղեցւոյս Քրիստոսի. նաև լուսաւորական եկեղեցւոյս Քրիստոսի. Շնորհակար մեծի Աթոռոյն սրբոյ Էջմիածնի. Շնորհ մեզ ժամանեալ զիր հոգևորական սիրոյ՝ Ամէն ժամանեալ զիր հոգևորական սիրոյ՝ Ամէն տուածալին օրհնութեան, և Քրիստոսապարտուածալին օրհնութեան, և Քրիստոսապարգև կենսաձիր ողջունի ի վերայ մտերիմ սիրելի ողջունի ի վերայ մտերիմ սիրելի բարեկամ իմոց՝ և որդւոցդ սուրբ լուսաւորչին երկուց հարազատացդ և Քրիստոսակէր իխանացդ՝ Շնորհ Մկրտիչ և Աթոռակալ Մարտիրոս Աղայիդդ նորափթիթ որդւոցդ, և օրհնեալ Տանց և ընտանեաց ձերոց՝ ընդ որում առատասցի ի վերայ ձեր չնորհք խնդութիւն խաղաղութիւն և ողորմութիւն Ամենասուրբ երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ լցուցանել և զարդարել հոգևկան և մարմնական բարութեամբք. Ամէն։

Եւ ընդ նմին գիտութիւն լիցի սիրելացդ չնորհիւ Տեառն և ողորմութեան նորին Թարց վնասու նկեալ հասաք ի Պայազիտ. և տեսաք զԴաւիթն զեռ յամառեալ ի կամս իւր՝ նստաք հանդարտ մինչև ցայսօր որպէս լուեալ իակ էք արդէն։ այլ արդիս լուաք հաւաստի ղեցալի լուրս՝ որ աւագ չաբաթ օր կենդանի նահատակ Յովհաննէս Արքեպիսկոպոսն փախուցեալ ի Թիֆլիզ գնացեալ է. և մեռելոցի երկուչաբթի օրն իմացեալ Դաւթի յոյժ բռնութեամբն կչտամբեալ և գանեալ է զոմանս ի վարդապետաց վասն ոչ ազդելոյն նմա. ուստի և ամենայն մխիթանքն միաբանեալ ի մի խորհուրդ քարկոչ և փայտիւ զիմեալ են ի վերայ նորա և տուեալ զբազում նս խատինս հալչն։ Եւ բնաւք մնծ և փոքր փակեալ զեկեղեցւոյ դուռն գըտնացեալ են ՚ներեան՝ բողոք բարձեալ առ խանն գնմանէ և պատմեալ զաւերութենէ սրբոյ Աթոռոյն և զբռնութենէ Դաւթին. իսկ խանն զարմացմամբ խօսեցեալ է այլ ևս մի երեսոցի ինձ Դաւիթն. և խոստացեալ է կատարել զնորդիս միաբանացն, և տակաւին անդ են. եկեալ արք հաւատարիմք պատմեցին որ այս վից օր է՝ որ չէջմիածին ոչ ժամ ասեն և ոչ հաց ուտել կայ՝ որոյ վասն և չաւելան ցաւք իմ. Աստուած զբանն ի բարին եղերէ և խաղաղեացուք չաւոբս չայսոսիկ։ Եւ զուք սիրելիքդ մեր կացէք ՚ծացէք ի հարազատութեան ձերոյ՝ յորոյզ չնորհակալ եմ յոյժ. որք և ողջ լերուք և չնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ հոգւոյ ձերոյ եղիցի։ Ամէն։

Աստուծով զօրացեալ ազնուազարս Գրիգոր նորաբողբոջ Աղային. և Նազարէթ Աղային հոգևորական սիրով ողջոյն և օրհնութիւն մատուցի չտակապէս։

Այսօր չաղագս պատմութեան մերոյ ևկն բազմակնիք մանէր զոր գրեալ էին եպիսկոպոսունքն չերեան և յղեալ մեզ. զոր և առաքեցաք առ Յակոբ աղային, երթեալ կարգալք և զլիալիրն անդ տեսանէք. գիրն չԱրազի ջուր անկեալ թացուեր է։

Ի Թեռա մերոյ ՌՄՆԱ-ին և յապրիլի ԻԷ։

ին գրեցաւ ի Պալատիա քաղաքս

Մարտիրոս Սղալ սուրբ կարապետաւ Մկրտիչ վարդապետն ՚ի ր է զնորին գիրն հասուցեալ ետուն։

---

**ԿԸ.** *Թուղթ Աթոռակալ Սիմէոն վարդապետի առ Ստեփաննոս ըազմանի*

*Մնծապատիւ և գերարգոյ, չնորհապարծ և Արհիապանծ եղբօրդ իմոյ սիրելւոյ Ստեփաննոս րաբունւոյդ՝ առընծայիլ սէր և գերկախաւան համբոյր յորդ բաղձանօք։*

1251։ Ապրիլի ԻԷ։ ի Կարին։

Ցետ որոյ լայտ լիցի վեհամեծութեանդ՝ զի գերապատիւ խանն մեր յաստուկ Թուղթս զրեաց առ երեսելի վաչայն՝ այսինքն Ղարաս և Կարնոյ. և ՄԷհմէտ վէլի սուլթանն էլ չի արար. որեւ նոյն Թղթովքն և Սրբազան ....ի օրհնութեան կոնդակօքն և երկրացոյց և միաբանաց բազմակնիք մանեբրատն եղեալ և սրբոյ գահոյդ ակաք ի Ղարս և մատուցաք զնոսին Թուղթն առ վաչայն տեղւոյն՝ որ եւ նա սիրով ընկալաւ, և հանդէս արար՝ զնոսին Թուղթն կարդալ ետ. եւ ամենեքեան ընդունեցին. և հրաման արար՝ որ կոնդակ Սրբազան....ին չեկեղեցին կարդացին. զԴանիէլի անունն բարձին և զպատուական անուն Սրբազան....ին չիշատակեցին, և յաստուկ բազմակնիք մանեբր զրեցին՝ Թէ զօծեալ գահաւոյեալ Սրբազան....ըն կընդունիմք և այլն։ Անոի եղեալ եկաք ատ ի Կարին՝ նոյն գունակ՝ զգիր խանին մատուցաք տեղւոյս փաչային, և ատ եւս մեծաւ սիրով ընկալաւ. եւ զոր ինչ խնդիր գրեցեալ էք՝ կատարել յանձն առեալ, հրաման արար՝ որ զկոնդակ Սրբազան....ին չեկեղեցիսն ընթերցան. զԴանիէլի անունն բարձին և զպատուական անուն Սրբազան....ին չիշատակեցին։ Եւ զմեզ մեծաւ յարգանօք ալսինքն զիս և մեզիք Սահփան աղային իջուցին չԱռաջնորդարանն և զանազան մեծարանօք պատուեցին, և ինքն մեծազօր փաչայն յաստուկ Թուղթս գրեաց առ Ղափու քեհայեին. որպէս զի լարքունատ հանցեն նորոգ ֆէբման հաստատեթեան ի վերայ անուան Սրբազան....ին։ և յաստուկ մէհնէբ մի գրել հրամայեաց աղային քաղաքին՝ առ պօլսեցիսն՝ որ և գրեցին. և այսու զանազան ՚ի զ ով վաչայի թաթարովն մելիք Սահփան աղան յուղարկեցաք առ այդր՝ որ ի հասանելն յայդր՝ այնուհետեւ յարդ ելիդ իմ ընդ վաչային զպատուքէհատուն և թաթարին խորհրդակցացաս հանդերձ մելիք Սահփանին. զոր ինչ խարճարարութիւն լիցի՝ զպատուքէհատուին և թաթարին զ ատեմամբն ինքեանց ձեռամբ լրեանց խարճելոց են ի գրուանս. յարմելիդ ձեռնամուխ մի լինիս. զի նոքա լաւագոյն գիտեն զտեղիս խարճելոյն, և Աստուծով հաստատելոց է Տէրութիւն Սրբազան....ին։ և զայլ որպիսութիւն ի մելիք Սահփան աղայէն իմանալոց ես։ Անաղորմութեամբն Աստուծոյ Դանիէլեանք կորացուցեալ եղեն. և գերապատիւ չակոր աղային (Թօքալ կոչեցեալն) ի մեր կողմն չրջեցաւ և մնաց չանասիրութեամբ չատագովէ սրբազան....ի բանից չառաչանալոյն։ Ուրեմն մնաց աչխատասիրութեամբ՝ հոգ տարցիս ամենայն բանից ոլորտութեան և ժամաւ առաջ ծանուցցես սրբազան....ին և մեզ. որով միամտեսցուք. և այսու ամենայնիւ լեր աղէ ի Տէր ի սիրելութիւն։

ՍԻՄԻՈՆ

Սրբոյ գահոյն Աթոռակալ
և եղբ վչտամաչ վարդապետիս։

Մելիք Սահփան աղային և տեղւոյս մոլպաի Թուղթքն այժմ չեղեւ չղկէն։ Վասնոյ որքան կարելի է՝ հոգատար լինիս՝ ձեռամբ դեսպանին և միջնորդական հոգատարութեամբ Ազգիկովիչ Գէորգ աղային՝ զամենայն բան ի կատար հանցես. իսէ Թէ ի հիւսիսակողմնէն Կարապետ Արքեպիսկոպոսն եւս ժամանեսցէ չայդր՝ որ և զգիրդ անպատկաս առնելով լեր կրկին աղէ ի Տէր։ Արքայի Թուղթն երկու տակեցաք չնծայելն միատակ արար այնպէս մատոյց։

---

**ԿԹ.** *Թուղթ Երուսաղէմայ նուիրակ Գրիգոր վարդապետի առ Դաւիթ կաթողիկոս։*

(Յորում չիշէ զկաչառս վասն Սահփան վրացւոյ չղեցոյն ի Պօլիս)։

Գերապանծ մայր սուրբ Պահոյդ արժանավայել Պահակալի և երիցս երանեալ Աստուածընտիր ծնողիդ մերոյ, և Սրբազնափայլ Սրբազան վեհապետիդ մաքուր զարչապարսյն չորդ բաղձանօք համբոյր մատուցանեմ և զարդիւնարար օրհնութիւնդ մչտապէս խնդրեմ։

Ի ՌՄԵԱ ՚ի Ապրիլի 25։ ի կարին։

Ցետ որոյ լայտ լիցի մեծի տէրութեանդ՝ զի սրբոյ Գահոյդ Աթոռակալ և Սրբազնափայլ Հարազատն Սիմէօն Արքեպիսկոպոսն, ամսոյս Ը-ումն ժամանեաց ատ. որոյ ձեռամբն ընկալայ զբաղձալի նամակ օրհնութեանդ. և ընթերցեալ ծանեայ զամենայն գիտալ և ընթերցեալ բանսն, չնորհակալ եղէ զՀայրութեանդ բանսն, չնորհակալ եղէ զՀայրութեանդ Թենէդ։ Ապա և վերոգրեալ իրողութեանց եղելութեանց որպէսն ծանուցանել Տէրութեանդ. Զի վերոյիշեալ Արդին ընդ Մելիքին և էլչին գնացին առ փաչային. և վասն Թուղթն մատուցին նմա. և նա սիրով ընդունեալ և զինդիրսն կատարեալ, և զինքեանս յարգեալ է սիրով։ Ցետ այնր ի վաղիւն բարձրաչուք կոնդակ օրհնութեանդ ընթերցոյց չկնեցելոյն, և զպատուական անուն Տէրութեանդ չիչատակեցին և չիչատակի եւս հասեալ ասացաւ. որ և քահանայք և ժողովուրդք լսելով՝ մեծապէս ուրախացեալ փառս մատուցին Աստուծոյ։ Եւ Թէպէտ փաչային գիր գրելոյ ասաց՝ ուղարկել ի Պօլիս, սակայն փողթեալ խնդրեաց իւրն խզմէքի 17)։ բայց Շէհիր քէհատին մահտեսի Ցովհաննէսն բանին վերահասու գոլով՝ զի փաչային չայլ մանսիպ 18) գնալոց է. վասն որոյ Թոյլ ետ զի մի այնքան փողն ընդ վայր կորուսանի։ Ո՞չ սահաւասիկ Սահփան Արքեպիսկոպոս կայ անդ ի Պօլիս, ողորմութեամբն Աստուծոյ ընդ Գէորգ աղայիմբ ձեռամբ զեսպանին ի կալին հոգատարել՝ ձեռամբ զեսպանին ի կատար ելանիք բանն։ ակն ունիմք չայս մօտաւորքս ի Պօլսոյ աւետեաց լուր գալոյ, որ չայնժամ զրեալոց եմք մեծի տէրութեանդ։ Ահա ողորմութեամբն Աստուծոյ և Շէհիրքեահա ողորմութեամբն Աստուծոյ բարեհամբաւ հասու չորդոր աղերս լինելովն՝ բարեհամբաւ Ցակոբ Աղայն ևս ի կողմն Տէրութեանդ խորհրդակցել ճչմարտութեամբ չատագով է Տէրութեանդ։ Ընդ մեր Գրիգոր ծառալիդ չուրութեանդ չիչատակելն և չիչատակի եւս հասեալ ասացաւ. որ և քահանայք և ժողովուրդք զրեցեալ գոյր հասուցի։ և առ հէքս գրեցեալն ևս ընթերցեալ, մեծապէս չնորհակալ եղէ։ Շէհիր քէհատի մահտեսի Ցովհաննէսի չատատովութիւնն յոյժ չատ է՝ զկպ առ Տէրութիւնդ, որպէս լայտ է. զի Թէ նա չմուծէր կաչառել զդործակալս, Սահփան արհին մբնայր աստ չարգելս, բայց ինչ և իցէ՝ Թէ չորդորանօք և Թէ չողջերդութեամբ այնու Բձ։ի հնարեաց զբանն. եթէ այլ ոք իցէր Ռ։ի հաղիւ կարէր կատարել զբանն. և զի գիտես Տէրդ մեր զնանձարեզուքիւնն մահտեսի Ցովհաննիսին զի այլոց հարիւրիւ հոգացեալն սա քսան զուռուչով հոգայ։ Եւ զինչ երկարեցից, ասմ չօրէ լայնմանէ մինչեւ ցայժմս զկպ եղեալ խարճարարութիւնն հոգայ. և զիւն ոչ լայտնէ. քանզի ի մէջ քաղաքիս սա է առաւել չատագով Տէրութեանդ, վասն այն գրեցի Տէրութեանդ Թէ եձՁ զուռուչն այն չուղարկեցես, զի առաւել չատագովութեամբ չանասիրեսցէ. և զի ի Թղթի նորին՝ որ գրեալ էիր Տէրդ մեր՝ այդ եւս աւելորդ խարճ եղեւ, այնմ բանէ Թուի Թէ վիրաւորեալ է. ապա զայսպիսի հանճարեղ, գործունեալ, չատագով այրն՝ չէ պարտ ի ձեռաց Թողուլ և վիրաւորութիւն առնել. որոյ զչատագովական հաւատարմութիւնն և հարատեւութիւնն ի չիշեալ Չալբասըրեէն և ի զատութիւնն ի չիշեալ Չալբասըրեէն և ի Մէլիքէն իմանալք ընդ այլ իրողութեանց որպիսութեանցն, զի նոքա կենդանի և խօսուն կեր են։ Վերջապէս խնդրեմ զի զէնքս չվերջացուցանել ի քաղցր սիրոյդ և ի մաքուր մաղթանացդ և սիրարծարծ գրութեանցդ։ Որ և ազէ լեր ի Տէր ի պարծանս Հայկեան ազգիս և մանաւանդ սրբոյն Սաղիմայ նախրայ Դրիդոր և եղ վչտալի Աբեղայիս. Ամէն։

Նաեւ այսր չօրս ի Պալատիտս Ա. գիր եկն առ Շէհիրքեահեաին՝ որ ընդ իւր գրոյն հասանի առ Տէրութիւնդ իմանալոց ես։ Նաեւ ահա ասան հատ լիմոն չանձնեցի Ս. Արհուին, ընծայ մեծի Տէրութեանդ, անուշ արասցես և զնէքս ի Չալբական սիրոյդ չմոռանայցես։ Նաև Սիմէօն Արհուին ասացեալ եմ և ահա գրեմ եւս և խնդրեմ զի զմեր զէնքն հատարմաս յուղարկես ի Ղարս, առ մեր գանձապետ Զէլմուկեան մահտեսի Սահակն, որ հասուցանէ մեզ. զի պիտանացս ինչ ինչ բան գոյ՝ հանցուք. աղերսեմ չձանձրանալ՝ այլ ի սէր սուրբ Տնօրինական տեղւոյն ի կատար հանել։

---

## Ե. *Թուղթ Գրիգոր Պատրիարքի առ դեսպան Միւշիւ Աղաթօն *)*

*Հզօր անյաղթ... Ֆէրուխեան փոխանորդ դեսպանի Միւշիւ Աղաթօն դերապայծառ յարդելոյ, եւ Աղգի մերում և մեր ճըշմարիտ բարեկամի, Քրիստոսաձիր ողջոյն, սէր և Աստուածապարգեւ օրհնութիւն մաուսցի պատուով։*

*Գերապայծառ մեծութեան ձեր յայտնի լիցի՝ որ ազգ մեր աւելի քան զերկու տարի՝ վասն ի յարևելեան յերևան եղեալ սուրբ Էջմիածնի ծայրագոյն Պատրիարքութեան և կաթուղիկոսութեան՝ բազում նեղութիւնս կրեաց մինչև ի ժամանակս մեր. որ այժմ ողորմութեամբն Աստուծոյ՝ և արդար իրաւամբ Օսմանեան Ֆէրուխեան հաղիւ կարացաք հաստատութիւն տալ նորա սուրբ հռչակաւոր Աթոռոյ կաթուղիկոսութեան՝ և մեք գրեցաք ամենայն քաղաքաց Հայոց՝ վարդապետաց և ժողովրդոց, (զի) ընդ մեզ համակամ հաճեալ ընդունեսցին զարժանաւոր Դանիէլ Կաթուղիկոսն, և կարդասցեն զանուն նորա յեկեղեցիսն. որ ամենայն ուրեք հնազանդեցան թագաւորական հրամանի և մեր բանիցն։ Բայց ի Զմիւռնի եղեալ Մարտիրոս վարդապետ ոմն՝ անհնազանդ եղեալ արքունական հրամանի և մեր, վասնորոյ երիցս սիրով զբրեցաք հետևիլ ամենայն քաղաքաց Առաջնորդաց, և ոչ կամեցաւ։ Ուստի խորհրդով իշխանաց մերոց պատշաճ համարեցաւ թագաւորական հրամանաւ առաքել զնա ի սուրբ Աթոռն՝ յորմէ եկեալն էր։*

*Եւ ըստ սրում ի Զմիւռնի բազում գոնցօլք կան, վասնորոյ իւրաքանչիւրոց դեսպանաց ասեմ՝ զիր առաք առ նոսա, զի մի ոք ապստամբին այնմիկ և կողմնակալացն տէրութիւն արասցին. որ ամենայն ի պատճառս բարեկամութեան սիրով վարեալ ևն։ Սակայն այժմ լսեմք հաստատ զրութեամբ՝ թէ ձեր մեծութեան գօնցօլն անդ տէրութիւն առնէ ապստամբ Մարտիրոս վարդապետին. յազգս որոյ աղերսեմք մեծութեան ձեր՝ եթէ և յարդութիւն ձեր հաճեալ էք կամաց գօնցօլին, մեք ըստ ամենայնի հնտուղ եմք կամաց ձերոց. իսկ եթէ ոչ, ողորմութիւն արարեալ հրամայեսջիք սմա և ընդ սմա եղեալ բարեկամին մեր Ալրոեան պարոն Մարդարին սիրով վարիլ և ոչ տէրութիւն առնել ապստամբ Մարտիրոս վարդապետին և կողմնականացն իւրոց՝ և զերապատ մեծութիւն զո լիցի ողջ՝ ի մշտնջենաւոր բարեկամութիւն*

*Գրիգոր Պատրիարքիս Հայոց։*

*1802. Ապրիլի 29.*

---

*) Օրինակիմ յիսկականէն գրեալ է Մանուէլ վարդապետէն, որոյ վերայ և գրեալ էր ի Ֆառանէն՝ «այս գիր յերկոցիս գնալոց է ի Խոզիսլ մանասի Սահեան Ամիրայէ որդւոյ Երեմիա աղային՝ որ թարգմանեալ առցէ ի տէրէն, առ որ գրեալ է և թէնգէրէ»— (Ե. վ. Շահն.)։

(Մելտոն Արգութեանցն գրէ առ Պաւիէն յղել Իվանէ Մարդարին և Մելտոնին զլաս, և և վասն սրումն՝ թէ ի Պալալիսոյ գիր երէք և դարձաւ, գնաց ըմբռնեալ)։



*չէր պարզապէս բանն՝ չեղեւ բաւական ի հանգստացուցանել զմիտս, մանաւանդ մինչ Աղայ Խիթօյեանցն և մեր հաւատարիմ նորոգ միաբան Անտօն վարդապետն ևս գրեն, թէ յորժամ եկեսցէ Ղրամատն և կամ Հրամատն կայ սերական յատկապէս առ կնօրինն, յայնժամ առաւել յօժարութեամբ ունկնդիր լինի զբրուածոցդ՝ և զգանս գնէ հանել զԽաչիմն ի սուրբ հարանարանէն և այլն։ վասն ամենայնի առաջնոյն ծանուցեալ եմք ի 26 մարտի. իսկ այժմ միայն զայս ծանուցանեմք՝ որ Պաւիէն նոյնպէս ամրագոյն ի յառաւութեան իւրում առնջէ և չարչարէ զողորմելի միաբանսըն, անկեալ ի գրուենս Վարսայ, Ալաչկերտսըն և կարնոյ փաշայից զօգնութիւն խնդրէ. որ և Ղարսայ փաշայն առեալ նաղդ զքսակ 20. և վասն 60. քսակի ևս չհոսսայ եթէ յաջողեսցէ վասն հաստատութեան Դաւթի, և առեալ նոցա զգիր և զմահեր, գրեալ էր մեզ թէ՝ թողութիւն արա, զի Պաւիէն չղեալ էր մեզ 20 քսակ, և մեք ոչ կամեցեալ կորուսանել զայն՝ հասուք ի ձեռս ևկողային դիւդիւկ մի և առաք զգրասն. բայց վերստին սէր բարեկամութիւն մեր ընդ քեզ է և աչն։ Եւ երկրացիքն ևս բազում կնքով զայս մանաւ էին չղեալ մեզ՝ թէ բանութեամբ կնքեցաք զմահէրն Պաւիէի, և ասա ի ներքոյ Մահէրին ևս նշան։ կեցաք թէ հրամայ Մահէրին ևս նշան։ կեցաք թէ հրամայ նաև փաչային եմք կնքեալ զի մի խաբեսցին սէր բարեկամութիւն մեր ընդ քեզ է և զայն տեսցեք ի գրեալ բանիցն և այլն. և յաւուկ յաւուկ գրով ևս նշանակեալ էին թէ 20 քսակ ետ, և վասն այն հրամայեաց մեզ վաչային կնքել և այլն։ Զորս զամենեսին զբրեցաք վաչային և իշխանաց չղեցաք խաբութիւնս փաչային և իշխանաց չղեցաք խաբութիւնս զայն ի Պօլիս, և ասա օրինակ մի ևս առ սէկոյ

Ծառայ և որդի սրբութեան ձերոյ Ներսէս Արեզակ *) պարտուիմ օրհնութեամբդ զհամբոյր մատուցանել մաքուր նրբանաց ոտիցդ, յաւէրժ մաղթէ՝ ընդ որում և աչքն Հարազատից մերոց տէր Մինաս և տէր Մելքիսէթ խոնհմաչատ քահանային բազում սիրով մատուցանեմ զողջոյն և օրհնութիւն։

## ՀԲ. Թուղթ Թիֆլիզեցի Տէր Սահակեան քահանայի առ Դրիզոր սեւաւորն Ցուսէփ կաթուղիկոսի. լի ամենայն զրահանութեամբ առաքեալութեան.

Սրբազնագունեղ Արքեպիսկոպոս Ռուսաստանու Հայոց իմ ողորմած Տէր.

..... Իմ առ սրբազնութիւն քո լեալն վերն յապրիլի 15. մատուցեալ եմք. ի ձէնջ գրեալ մարտ 15-էն թուղթն որ (առ) մահտեսի Միքայէլն տեսի և գիտացի զանցուն տեղւոյն, և ընդ նմին և ես մինչ ի վառօդհանէն առ մահտեսի Աւաքեայն 19) մնալի զսոյն Զաքկին կատարել անդ՝ ըստ որում չտնէին Քահանայ. յաւագ չարաթ օրն եկեալ էջմիածնայ Սահիանոս Եպիսկոպոսն որ է Թիֆլիզցի, և էր դասապետ և ժամասաց յԱթոռոջն. ըներեալ էր ընդ իւր քանի ժանտարս և կոնդակս զօրաւոր քանիւք հինսեալ, և մանաւանդ մի ևս ի միաբանից և լիշխանացն առ Դանիէլ խառնակիչն՝ որք գըրեն թէ՝ ոչ երբէք ընդունելոց են զնա ի կաթուղիկոսութիւն, և եթէ ոչ հրաժարեսցի ի նոյն մտացն, նզովիւք հանելոց են ի միաբանութենէ իւրեանց և յորդիութենէ Աթոռոյն։ Բերեալ էր և թուղթս առ իշխանս. թէ առ Թշնամիսն և թէ առ բարեկամն, ևս եկեալ ի գիւղն՝ և ընդ իս եկեալ եպիսկոպոսըն, և առաջնորդելով նմա զնացաք առ նոսա, և տուաք զթուղթսն. բարեկամքն ուրախացան, և Թշնամիքն ի սուգ մտին։ Եւ մինչ ժողովուրդքն երկիւղ ունին ի վառնգի Թշնամեացն, ոչ ախորժեն զեպիսկոպոսն ի տունս իւրեանց տանելու։ Վասնորոյ ես երեմն յամենայն ուրեք և խօսիմ զհարկաւոր խօսելիսըն։ Ցես տէր իմ զսատիկ երկիւղն նոցա. որք ունին ի խռովչացն և չառաջնորդէ իւրեանց Յուդայաստարաս Պատրիարքէն, զի ոչ կարողացան ժողովել ի (մի) վայր և ընդհատուլ զմանաւր միաբանիցն և զգրեալսն ի տունս կաթուղիկոսէն, զի մի զուցէ Տէրութեանն այլ իմն կերպ ծանուցանն խռովիչքն, որպէս թէ մեք զԴաւիթն Ռուսաց Տէրութեանն է չատագով և Դանիէլն Օսմանցւոց. վասն որոյ որ ոք զԴաւիթն ոչ արտաքսէ և զԴանիէլն ոչ ընդունի՝ նա Ռուսաց կողմն է։ յերեսս նու խանէն եւս զեսպանն թուղթ ունելով առ տէրութիւնս Օսմանցւոց զօրաւոր բանիւք, մատուցեալ է թէպէտ՝ բայց զեռ պատասխանն չէ առեալ՝ վասն իւրեանց բազում մեծամեծ զբաղմունս ունին՝ որ լսատամբ վաշայիցն. այլ յուսադրեն թէ կատարելոց են զխնդիրն երեսս նու խանին։ Պատրիարքն և խռովիչքն ի մեծ տարակուսանս կան և երկնչին յոյժ ի ժողովրդենէն. վասն որոյ անցեալ կիւրակէին առ յերկիւղին օ֊ֆէցիալ և սօլդաթներ բերեալ կացուցին առ դրան եկեղեցւոյն, և մատսան ժամուն արձակեալ եղեն ի ժամուն, որ ի հասարակ յայլ կիւրակէին Բ ժամուն արձակեալ լինէր. այնքան չատափուճութեամբ կատարեցին զպօմման և զպատարագն, մինչ զի վերատեղծեալն ևս ոչ ասացին, և ոչ քարոզ եսուն, որպէս սովորութիւն է միշտ քարոզ յայլ ամենայն կիւրակէս՝ քանզի երկնչէին կամեցան չատ աւարտել զպատարագն որքան գեռ ժողովուրդքն չեն յաճախեալ. խռովիչքն գնացեալ առ նախարարութիւնն Ալբայինն, այսինքն խորհրդարանի անձինս՝ խնդրեալ են թէ՝ հրաման լինիլ Դանիէլի յիշեքիլսայն Բայազիտու և կամ ի սուրբ Կարապետի վանքըն նստիլ. նոքա հարցեալ թէ՝ չատ քան զայս և երբեմն պատահեալ է ժամանակաւ այդպէս լինիլ. խռովիչքն պատասխանեալ են թէ՝ ոչ. նախարարքն ասացեալ են՝ ուրեմն այժմ ևս այդպէս լինիլն ոչ լինի։ Ապա տարակուսեալ աւեն, էջմիածին Ռուսաստան գան՝ և մեք ոչ կամիմք անդ լինիլ կաթուղիկոս. պատասխանեալ են թէ՝ այդմ այդպէս լինելն խռովութիւն բերել և այլն։ Դանիէլն երդեալ փաշային տեսութիւն գնալով. ի վատամտութենէ յաղթեալ որպէս թէ Աստուածացեալ է՝ (Եղէկ 20) քաշելով և ի վարդարեալ ձիս նստելով, չատչոյ 40. քառն աշխատող ունի.քայց ամենայն վասն քո է որ այսպէս կըջանայ։ Աստուած օգնական եղիցի եւ աշխատանքն մի ունայնասցի.... ի Նախիջեւան եւս գրեցաւ այսօր, որեւ նոքա տեղեկացեալ անցեցն աստ, գուցէ զարթիցեն։ վասն եպիսկոպոսի ի տունս իշխանաց չտանելն՝ մի գուցէ տրտմիցիս. չերթալն բարւոք է քան երթալն. քանզի չգիտէ կէչպն խօսելոյ, ես բաւականին խօսիմ եւ ծանուցանեմ եթէ որ յաջողեսցէ Տէր։

Մնամ Սրբազան Տեառնդ՝ ծառայ եւ որդի

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԲԱՀ. ՏԷՐ ՅԱԿՈԲԵԹԻՆԵԱՆ 21)

1802. ի Մայիս 1.

ի Կաս Պօլիս։

«Պայծառ իշխան Բարսեղ երանելւոյն մերոյ ողջոյն ունիմ...։

*) Որ զինի Յոհաննէս Կարբեցւոյն ընտրեցաւ ի կաթողիկոսութիւն, Ա. վ. Շ.



հանայս և հարիւրաւոր իշխանս ընծայացս նելով է գնացեալ, չառաջէն գաւազան կրել տալով։ Փաչայն առ այս սրտմտեալ՝ զմանս իշխանս և քահանայս ի կապանս է մատնեալ, և կամ՝լով զմանս կախել ընդ ունկն, և հրամայեալ է զԴանիէլէն ըմբռնել. Դանիէլն փախուցեալ է ի Բայազիտ. և անդ եւս ոչ կարացեալ մնալ, փախուցեալ է ի Բաղէշ, որ է Բիթլիզ, որ է Քրդստան։ Յէրզրումայ փաչայն առ այս պատճառի Բ֊ն. քէսայ տուգանք է առեալ, և ապա արձակեալ զըմբռնեալսն։ Ժողովուրդքն ի մեծի վրդովման են. այլ սպասեն թէ կայ ի կայսերէն քննեալ գործքն Դանիէլին և Եփրեմին, հաստատեսցի վերատին կաթուղիկոսութիւնն. և կամ յներեանու գեսպանին գրովն և խնդրանօքն հրամայեսցի ընդհանրական ժողովք լինիլ մասարն և կոնդակն ընթեռնանիլ. և ժողովրդեան կամք հարցանել և վերատին Դաւիթն հաստատեսցի. իսկ եթէ յերկոցունց ևս զուրկ մնասցեն. ապա յայնժամ անճարացեալ վըտանգն (յանձն) առնուցուն, և բողոք բարձցեն առ թագաւորն՝ ընկենուլ զպատրիարքն. որ թէ կարողասցեն՝ խօսել վասն կաթուղիկոսութեան։

Յանուն իմ զանգատեցին առ դեսպանն, որպէս թէ յամենայն ուրեք առ իշխաղն գնամ և չատագովեմ զԴաւիթն, և հակառակիմ Դանիէլին, և աստ պատրարքին. վասնորոյ եւ առ այս Դանիէլեանք վասն եպիսկոպոսի ի տունս իշխանաց չտանելն՝ մի գուցէ տրտմիցիս. չերթալն բարւոք է քան երթալն. քանզի չգիտէ կէչպն խօսելոյ, ես բաւականին խօսիմ եւ ծանուցանեմ եթէ որ յաջողեսցէ Տէր։

Մնամ Սրբազան Տեառնդ՝ ծառայ եւ որդի

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԲԱՀ. ՏԷՐ ՅԱԿՈԲԵԹԻՆԵԱՆ 21)

1802. ի Մայիս 1.

ի Կաս Պօլիս։

«Պայծառ իշխան Բարսեղ երանելւոյն մերոյ ողջոյն ունիմ...։

## ՀԳ. Յոհաննագիր մի *)։

Պատճառ գրոյս այն է որ ի ՌՄՄԱ թուին և ի մայիսի մուտն, մեք սրբոյ Գահին էջմիածնի բնիկ միաբանք Աստուածատուր և Բարսեղ վարդապետաքս, վասն անցեալ խռովութեան որ եղև ի մէջ մերս միաբանութեան ընդ գերերջանիկ վեհապետի Տեառն մերոյ ի Թէլադրութենէ չարին սատանայի և ի նորին արբանեկացն, չաղագս որոյ գրեցաք զայս թուղթ քանի գլխով. նախ՝ Դանիէլ վարդապետին կամ իւրայնոցն, երկրորդ՝ Եփրեմ վարդապետին կամ իւրայնոցն, ոչ թէ զրեմք առ նոսա, և ի նոցանէ թուղթ ոչ առնումք. և եթէ պատասխիցի ի նոցանէ առ մեզ թուղթ գայ, թուղթն այն անլոյծ կնքով մատուսցի ի սպաս նորին մեծութեանն։ Երբորդ՝ եթէ դարձեալ չանդգնիմք որպէս չանդգնեցաք՝ թէ զսա կաթուղիկոս չեմք ուզիր, և կամ ի չիշխանութեանս նորին խառնուելոց լինիմք, և կամ ի միւս անգամ այսպիսի բանս՝ միաբանից լեզու լինելով գասնիմք ընդ նոսա, մեք իւրաքանչիւրքս հինգ հարիւր թուման տալոյ լինիմք խանին։ Ի կողմանէ Աստուածատուր վարդապետիս՝ Անտոնի որդիքն Միքայէլն և Զաքարն, ի կողմանէ Բարսեղ վարդապետի՝ Թաղէոս վարդա-

*) Տաճկերէն «էլչինդն էյմիտիմ. թիւթինա տի կէօրիյօրում. «այսինքն ձեռնէն չկերայ, ծուխին մէջ կը տեսնեմ Ց. ք. Մ.

*) Օրինակեմ գայս ի գաւազանէն գրեալ ձեռամբ Ներսիսի Աբգ եպիսկոպոսի. ն. վ. Շ.

պետի եղբայր Յարութիւնն և Ռէթէոս վարդապետի եղբայր Ներսէս և Յովաննէսեան եղեն զամին 22). գիտութեամբ Մէլիք և Իւղբաշի Աղալիցն գրուեցաւ այս գիր՝ և կնքով մերով կնքեցաք և տուաք նոցա ի միամտութիւն։

Նաղիր Նովրուզ։ Մէլիք Աբրահամ։ Իւղբաշի Գաբրիէլ։ Աստուածատուր վարդապետ։ Բարսեղ վարդապետ։ Այլ բէկ։

## ՀԶ. Թուղթ Դանիէլ կաթողիկոսի առ Անտօն վարդապետ

Յիսուսի Քրիստոսի ծառայ Դանիէլ և չնորհիւն նորին կաթողիկոս...

Սիրեցեալ որդւոյ իմոյ Անտօն խոհեմառատ և չնորհափայլ վարդապետի. որում և գիտութիւն լիցի. զի ի 16 ապրիլի գիր եհաս առ մեզ ի նորին ամսոյ 28 որով ծանեար զնարկաւորսն։ Դրեալ էիր առաքել զներսէս վարդապետն. այլ քանզի Յօհաննէս կենդանի նահատակ արխիեպիսկոպոսն եկն յայդր, ոչ ևս յօժարեցաք առաքել զնա, մանաւանդ զի ի վերայ Երեանու ժահ սորին է գալն յահ թշնամեացն, որք միշտ արեան ծարաւի են նորա. և ի վերայ Ղարսայ՝ հաղիւ գնայ 15. և ի 20 աւուրս. նմին իրի ի տեղի նորա յայտնեցաք օժանդակ լինել ձեզ լիչեալ Արհնոյ։ Վասն տէր Մովսէս հաւատարմին մերոյ զիաչ և զվկայական խնդրելոյդ, գրեցաք ևս Առաջնորդ Յօհաննէս վարդապետին հանդուցանել ըստ պատշաճին որպէս յաջորդ մերոյ, քեզ ևս գրեմք զի ընդ նմա ի միասին խորհրդով արասջիք, որպէս և պարտ ու պատշաճ իցէ։

Ի Պալաղիտու քաղաքէս եպիսկոպոսաց և վարդապետաց, քահանայից և իշխանաց կնքով՝ զմանէր հաւատարկական մատուցին առ Յօրապետան, և լղկեին ի ձեռս քո, զի զու մատուցես որպէս արժանն է. և ևս զբրեմ, եթէ ոչ կամեսցին զոքա հալիլ յայն ուղիղ ակնարկութեամբ, բանիւ նոյն հաւատարկութեանն մատուցես զայն առաջի Աթոռոյ Կալսերական մեծ ազգմութեանն՝ առաքելով ի ձեռս Եփրեմ Արքեպիսկոպոսին և ազայ Մինասին. քանզի այսպէս է խնդիր զրոցացն առ քեզ, որպէս և ծանուցեալ եմքս, և հարկաւորեմք առնել ըստ խնդրոյ նոցա։

Եթէ ոչ կամեսցեն զոքա յօժարութեամբ լսել հաւնկնդիր լինել որպէս հրամանակատարք կայսեր. յաղագս Ղրամատին թէ զինքդ եղև և ձեր մնաց և յաղագս այդ իշխանաւորաց պարզ գիտաւորութեանն՝ թէ օժանդակ լինելոյ են մեզ թէ ոչ. կամիմ օր յառաջ ծանուցանել ըստ ամենայնի պարզապէս գրութեամբ. և ևս զինչինչ խօսեցին զոքա ընդ Գաւթին կամ Գաւթին ընդ զոսա. և զինչ մտածմունք իցեն առիթք խարբալելոյ զմիաս զոցա. կամիմ և զայս բարւոք հետամտութեամբ տեղեկանալ և ծանուցանել։ Մեք ևս եթէ Տէր ներեսցէ և յաջողեսցէ, ունիմք ի մտի կատարել զնանդէս օծութեան մերոյ՝ երևման աւրբ Թաչին ոծոյ։ Ամոռակալ Սիմէօն վարդապետն որ Գաւթի հրամանաւն ընդ Երևանու խանի փիչխան տաճկին գնացեալ էր ի Ղարս և տեղւոյս փաչային մատուցանելով զ20 քսակ, առեալ էր հրամանաւ նորա մահսար յաղագս ջատագովութեան Գաւթի, անդուստ ևս անցեալ և գնացեալ էր ի Կարին. խոստացեալ էր և կարնոյ փաչային 60 քսակ. բայց չէր կարողացեալ հոգալ ինչ, և գարձեալ էր լեռս ունայն։ զամսոյն ապրիլի 26։ Ղարսեցիք ևս գրեալ էին առ մեզ զմահէր. ահա զօրինակն լղեցաք առ ձեզ՝ և նախագտարն ի Պօլիս, հանդերձ իշխանաց և փաչայի յատկական գրովքն, որովք գրեալ էին պարզապէս թէ 20. քսակ էր լղեալ և ոչ կամեցեալ կարուսանել զայն՝ եառաք ի ձեռս նոցա զ ի ւ ա ւ ւ ի 23)և առաք զդրամն ևս։ այլն։

Սրբոյ Աթոռոյ միաբանից ի Զաւկիա անցքն՝ դիտեմ զի լուեալ իցէք. բայց և մեք ահա առ մեզ լղելոյ զօրինական լղեցաք առ ձեզ, զի ընթերցջիք և առաքեսջիք առ Յօհաննէս պանծալի Արհի առաջնորդն, և նա տեսցէ և լղեսցէ առ Եփրեմ արհին։ Այլ և յամենայն լիւրաքանչիւր ժամանակս հետզհետէ գրութեամբ ծանուցեալ եմք սիրել։ զոյդ այլ և զուք ամենայն արիութեամբ ջանադիր և անձնադիր լինիք ի վերայ եղբարց և հարցն օրինաց և Աստուած ոչ կորուսանիէ զվարձս աշխատութեանց ձերոց։

Ողջ լիր ի Տէր, և չնորհք սրբոյ հոգւոյն եղիցի ընդ քեզ միշտ. ամէն.

ՌՄՂԱ. Մայիսի 5. ի Պալաղիտու

Ներսէս արեղ։ ի բաղում կարօտիւ պարանոցապար համբուրիւ ողջունէ զողջութիւնդդ, և կայ վասն հզօր զօրութեամբ առաւել ճոխանալոյ ձեր միշտ զօրաւոր։

## ՀԷ. Թուղթ Մանուէլ վարդապետի առ Ներսէս վարդապետ

Փառեալ ի պարանոց ցանկալի եղբօրդ իմոյ Ներսիսի վարդապետի ողջունեմք։

Առաջին և յետին գրութիւնք ձեր... հասին առ մեզ. . իսկ որ ինչ յայս ելոյն եղելութիւնք թերևս այլք ևս գրեն. իմն առ եղբայրդ եղիցի կշռելոյ ևնթակայ։ Նախ կոթողեանն՝ Սահմանն վրացին, մահել ի 12 ապրիլի դէպուղիղ գնացեալ առ կողմնակիցսըն Եաղլի Գէորգին, (Աղալէկեան) որով ներկայացեալ դիսպանին, որոյ բանիւ զօրացեալ՝ զոր ինչ կամեցաւ խօսիլ՝ անարգեալ արքանեկօքն հանդերձ խօսեցաւ, և լցոյց զքաղաքս վերստին այլաձայն հնչմամբ։ Յաւուրն յանուսիկ չատ չանացն գնալ միանդամ առ դիսպանն երկու մարդով, ոչ կարացին հանգուցանել զհրամայողն մեզ. վանորոյ աճէր և զօրանայր խարդախութեան նորոյ աճէր և զօրանայր խարդախութեան նորա բանք, առ խառնիճաղանճս, մինչ զի յապրիլի 27. յԱչխարհամատրանի կիւրակէի յապրիլի 27. յԱչխարհամատրանի կիւրակէի յառաւօտն՝ սնոտի կասկածանօք կանուխ սկսեալ զժամերգութիւնն, քանի մի պահանայս կացուցեալք ի կողմն եկեղեցւոյ և զարդ ոչ ունիք առացեալ, յառաջ քան զտաղորական ժամանակն արձակեալք յեկեղեցւոյն, որ աստուիսք յաճախեաց ի հասարակութիւնն քանի մի օր։ Որ ողորմութեամբն Աստուծոյ չորեքշաբաթի օրն որ էր 30 ապրիլի. եկեալ հասին բազում գրութիւնք սըրբոյ բազան վեհին և ձեր. զորս տարեալ եմ մատուցեալ իւրաքանչիւրոցդ՝ և այլն որպէս վկայէ ուշիմութիւն քո՝ այնպէս վարեալ։ Կարկեցան չարալուղիչն բերանք, բայց սպասէին գալստեան փօշոյն, զի մեծ յոյս ստացեալ էին ի Գէորգէն. և այս ի գերև եղ ի 6. ամսոյն ի գալ փօշոյն. և լուան թէ ի Տնտեսի կիւրակէի օրն սկսեալ է լիչատակել յամենայն տաճարս Աստուածոյ՝ ամենապատուական անուն Տեառն մերոյ, և մարդ ամենեքեան ընդ լծով խոնարհութեան թէև ի կիզծ. բայց Աստուծով ևս մեր առանց վնասու ժամանակաց ի Նաւահանդիստն առ այժմ երկրորդ՝ ամսոյս 5 եհաս գիր ի սրբազան եփրեմ արհւոյն ի մարտի 11. անդ գրեցեալ. որով ծանեաք թէ և ի 16-ին գրեալն եղեալ է ի փակէթ դեսպանին, և հրաման էր մեզ գնալ և խնդրել, զոր իմ ընդ Տէր Աւետիս և Տէր Մելքոն Քահանայից գնացեալ ի Պէօլիւկբէրէ, ներկայացեալ նմա, զրոյն պատճառաւ բազում ինչ խօսեցաւ. և թարգմանն մեր եղև մեծ փօնթօն թարգմանի եղբայր Պետրոս փօնթօնին։ Բանից սկիզբն կալայ յառաջագոյն զիւր ասացելոյն թէ՝ ես այսուհետև Պանիէլ վարդապետին բարեկամ եմ և թշնամւոյն թշնամի. ես խնդրեցի հաստատուն մնալ ի նոյնմիտս, և բանք չատ. բայց ինքն ոչ կարաց ծածկել զծածկեալ նենգութեան ի սրտին։ Իրրեւ ասացի թէ այս ամենայն տարաձայնութեանց պատճառ Գէորգն է. ասաց երկար առարկութեամբ թէ՝ որպէս զուք աստ ընդ վայր զԳէորգն առեալ ի բերան բամբասէք, նոյնպէս և Եփրեմ Արհին յանկոյս ի մէջ քարոզի զիս ի բերան առեալ է թէ՝ դեսպանն է պատճառ ամենայնի. ևս զինչ արարի նմա։ Պատասխանեցի քաջ լինի այնպիսի խոհական առն առնել ըստ այդմ սարսի ինչ. բայց ծանուցանողք սերութեանդ նենգութեամբ սրտի պատրեալ այդու բանիւ զմնծութիւն քո չատելութիւն ի մեր կողմն չաժել Չանացեալ են զքեզ. և այլն։

Բայց եղբայր, տես թէ քանի զգուշութեան պէտք են մեզ առ ժամանակ ինչ, և ունիմք մեք յայսկոյս ոչ զոք. զի որպէս յաւուրս սրբազան տեառն մերոյ ի վէքիլէն սկսեալ մինչ զխոհարարն անզգոյշ և անհոգ սկսեալ մինչ զխոհարարն անզգոյշ և անհոգ էին. նոյնպէս և այժմ. այլ արասցէ մեզ Աստուած. ևս զինչ կարեմ առնել. ևս ի պատուած. ևս զինչ կարեմ առնել. ևս ի պատուած. ևս զինչ կարեմ առնել. ևս ի պատ

հաստատուն հոգս հոգալ վասն պատրիարքութեան տեղւոյս, զի նմին համարձակելոյ ժամանակ գայէ սա՝ առանց կարծեաց յորդալի արկանէ զՊատրիարք Հայրն մեր, զի յայն օր լիշեաց կրկին զանուն Յովհաննէս վարդապետին ըստ առաջնոյն. թէ ես կամիմ ի մէջ ազգի ձերում սէր և միաբանութիւն լինիլ, և հրաման կայսերն է միաբանութիւն լինել ի մեզ, և Յովհաննէս վարդապետն ի զուր դատապարտեցաւ. ես ասէ այժմ ոչ ունիմ ասել ինչ՝ սպասելով մեծազօր կայսեր հրամանին ցայնժամ ասացի՝ ողորմութեամբն Քրիստոսազօր կայսերն Ղրամատն եկիալ է և անուն Տեառն Դանիէլի լիշատակեալ է յամենայն եկեղեցիսն. և հրաման է կնօրինէն հոգ տանել գործոյն մերոյ։ Իբրև լուաւ զայս՝ Թուլացան բանք նորա և ասաց. եթէ եղեալ է մեզ պինդ կարիմք առնել, այդ է գլուխ ամենայնի, և ես առ որ լինի հրամանն նորա, նմա լինիմ օգնական։

Զօրըորդ՝ որպէս յայդրէն դաւաճանն՝ ի պէտս աղքատաց և սրբոյ տաճարին Աստուծոյ ժողովեալն, հարիւրաւոր քսակիս վասնէ և խոստանալ հեղհեղակ վասնէ, և զՅօհաննէսն դարձուցանել ի պատրիարքութիւն. նոյնպէս և մարդերս *) վարդապետն Զմիւռնիոյ և համախոհն անդ եղեալ իշխող Չէլէպի Աղայ ասացելոյն՝ զերկու գիրս առեալ մինն առ ծովի իշխողն և միւսն Ֆէհիւ բէկին, որպէս թէ հանեալ պիտակս **) Մարտիրոսին և արացին զնա Պատրիարք, խոստանալով տալ մինչ ցերեկ հարիւր քսակ դրամոյ։ Խոստմունքն լուծին մնացմանց և Տէրութեանն չէջէր. հարիւրն՝ վասն Յոհաննու, հարիւրն՝ վասն Մարտիրոսի, և հարիւր սակս դաւաճան օձին, որովք պրկիէ սարսեցան ոսկերք մեր, և մերձեցան բնկանիլ մէջք մեր, հասեալ յայն վտիտ աստիճան մինչև յուսահատ լինիլ բազմաց, դասելով զկոչմնականութիւն դևապանին և զբազում դրամոց խոստմունս։ Այլ Աստուած որ կրէ ի հզոր ձեռին իւրում զսիրտ անբուժականց և պետութեանց, ի ձեռս որոց՝ զորս մեք քաջ գիտեմք թէ ի մերազնէից և թէ տիրականաց սոցա կառավարչի, գլուխ զչար

*) Փոխանակ ասելոյ Մարտիրոս։
**) ԻՔԼագ՝ տճկ. գիր ազատութեան։ ց. ք. Մ.

խորհուրդ Աքիտոբէլեանց և վերստին նոր հաստատեաց զԱստուածընտիր վեհապետիս սրբազան Տեառն մերոյ, և ի սոյն օրէ ունիմք ի ձեռս մեր զերկու հրովարտակ արքունի, մինն յաղագս ս. քաւարի կորստական Ստեփաննոսի, որ բերցեն ի Պալաշիտ, արկցեն ի ներքոյ իշխանութեան սրբազանին, որ առցէ զնաչխէն սրբոյ Աթոռոյն. սակայն տակաւին ոչ արկաք ի գործ զնոյն հրաման, սպասելով նշանելոյ խանի մարզոյն աստի, առ որ եւս պատասխանի արարին եղանել, և եռաւ գիրս պատասխանի՝ ընդ իւր բերեալ գրոյն. այսպէս թէ՝ յառաջ և յետ ազգաւ ընտրեցաւ Դանիէլ կաթուղիկոսն. էր վասն և Տէրութիւն մեր անդառնալի հրամանաւ զնա հաստատեալ է լինել բոլոր Հայոց ազգին կաթուղիկոս. և զԴաւիթ վասն դաւաճանութեանն հերքեալ ի բաց մերժեաց յայսմ իշխանութենէն, և այլն։ Աստուծով ի միջի քանի աւուրցս զկնի գալոյ այլազգայն հանեմք և զվրացին ցանկացեալ վաճառքն։ Այլ ես միւս հրովարտակ չնորհեցաւ մեզ թէ՝ սնազլուխ ոք ի միաբանիցն Էջմիածնի եթէ առանց կնքառնակ Թղթոյ Դանիէլ կաթուղիկոսի Հայոց ուր և գայցի, պատիժ կրեսցէ և զարձցի լետս գնալ յԱթոռն. և Դաւթեանք մի քնաւ համարձակութիւն գացեն ի Տէրութիւնս մեր. որպէս ապա այս հրովարտակ քանի մի օրինակ գրեալք՝ և յամենայն ուրեք առաքելիք են առ ի չայտ առնել ի դատաստանին. և օրինակ մի եւս առաքեմք առ Եփրեմ Արխին։ Որոնք ձեր այսպէս գիտացեալ՝ դահանալով զԱստուծոյ հրաշագործողէն առօթս առնելով վասն հոգւով չափ աշխատացաք, լերուք պղջք ի պարծանս Տեառյի սրբոյ բազան Տեառնս և եղբօր քո.

ՄԱՆՈՒԷԼ ՍԵԻԱՒԻՐԻ

1802 մարիս 9
ի Պալատ (Կ. Պոլիս)

## ԽՋ. Թուղթ Աղ. Կուրակինի առ Դանիէլ կաթողիկոս

Բարձրասլաճեան և Ամենապատուելի Դանիէլ Պատրիարգ

Նորին կայսերականի մեծութ(ւն)ն՝ Ամենաողորմածագունեղ Թագաւորն իմ, բարեհաճելով զիջանել ընդ խնդիր ձեր, որ առ նորին մեծութիւնն մատուցեալ՝ առ իս ժամանելովն ի ձեռն աստ դառնելոյ Հայոց Արք Եպիսկոպոսին Եփրեմայ, Ամենաբարձր չնորհիւն լօժարեաց արժանացուցանել զձեզ և համայն Պատուելի Ազգն Հայոց՝ Ամենաողորմ դրամատիս այսինքն իւրոյ մեծապարգև հրովարտակիւ, ընդ սմին և չնորհել Ձեզ 30 դազ զար ճոթ, 50 դազ բողումնիթ. զորս առ ի հասուցանել ձեզ՝ յանձնեցեալ է լիշեալ Արք եպիսկոպոսին։

Ուստի գտանելով և իմ ի նորին կայսերական մեծութեան՝ զբարձրագոյն երևելի հովանաւորութիւն որ առ Ձեզ և առ ամենայն ազգն Հայոց յատկագոյն բաւականութեամբ չնորհաւորեմ Ձեզ զսոյն ողորմութիւն։

Խոնարհութեամբ Ձերոյ բարձր
աստիճանութեան ամենախոնարհ
ծառայ Աղէքսանդր Կուրակին։

Սանկտ Պետերբուրգ
մայիսի 12 աւուր.
1802.

## ԽԷ. Թուղթ կարապետ եւ Աբրահամ վարդապետաց առ Դաւիթ.

Երիցս երանեան Աստուածընտիր և պըսակազգեաց՝ Սրբազնագունեղ ᵖᵖᵖպտ. ամենայն Հայոց և մեր հոգևոր ծնող և բարերար Տէր։

Ձկնի որոյ՝ գիտասցէ վեհափառ Տէրդ մեր. զի զամենայն գրեցեալ Թուղթն ձեր՝ մի զկնի միոյ հասին առ մեզ՝ և զորոց հարկաւոր Թուղթ զոր հասուցաք զիւրաքանչիւրան առ ինքեանս. ևս և ընդ մեզ բերեալ մնձ մահտեր և զամենայն Թղթոց սահին Թարգմանել առեալ ընդ նորոգ յղեալ Թղթոյն որ ի ձեռն մեր հաստատմամբ Թարգմանեցեալ եղև՝ զամենայնն գնոսա՝ մատուցաք Քնօրինին և կաւալեցկուն. չև ևս ուցաք Քնօրինին և կաւալեցկուն. չև ևս ուսնիմք՝ ի նոցանէ զպատասխանի՝ որովհետև ինքն կնօրինն ի մէջ այս քանի աւուրցս զկնի գալոյ է աստի ուստի եկեալ էր՝ և մեք գառնալոց է աստի ուստի եկեալ էր՝ և մեք բացորոշակի խնդրեցաք մեզ ճանապարհ՝ կամ գիմել ի դուռն կայսեր կամ վերադառնալ ի սուրբ Աթոռդ՝ տեսցուք թէ որպէս տալեն մեզ զպատասխանին. զառաջին պահարանաւ Թուղթքն Հաչտարէսեանու զոր ձեռամբ մեր Յովսէփին էիր յղեալ՝ ի մալխի 2ին ամք յղեալ՝ բայց զնորոգ գրեցնալոգ ընդ քանի հարկաւոր Թղթոց՝ զորս աստ՝ ոչ եառան տեղի ունկն մատուցանելոյ վասն խըստասրտութեան իւրեանց՝ (ըստ բանին զի մի՝ լուիցեն ականջօք իւրեանց և այլն) ընդ կարաւանին Մակարիու յղելոց ամք զորս ունին երթալ այսօր կամ վաղն։ Իսկ իւանէ Սարդարն և Սոլօմոն մէնթարն ի կողմանէ բոլոր քաղաքացոցս՝ հանդերձեալ են երթալ ի դուռն կայսեր՝ վասն չնորհակալութեան և վասն ողորմութեան նորին որ ի վերայ քաղաքիս։ Վասն այսր և ինքն ևս գրեայ առ Տէրդ մեր՝ զի եթէ ունիցիս Թուղթ ինչ ընդ նոսա առաքելի՝ փութա զի օր մի չուտով հասուցանիցես ընդ որում հաւատաստով հասուցանիցես ընդ որում հաւատարիմք են։ Մերս կնէազ Սոլօմոնն ևս՝ ունի վասն սոցա գրեալ առ Տէրդ մեր՝ և պինդ լինելն ոչ գիտեմք՝ բայց միայն խնդրեաց ի մէնջ զի և մեք գրեսցուք առ ի կատարել խնդիր սորա և մեք ևս սպասեմք վերջին պատասխանւոյ սոցա. զի եթէ հրաման լիցի ի սոցանէ դէպ ի կայսրն՝ գնալոց եմք ընդ կնօրինին. ապա՝ թէ ոչ՝ զտուեալ Թուղթն մեր որ ընդ Սահակ ազային՝ և զնոյն Թղթոյ հաչիւն ձեռագրով հաստատելոց եմք Գրիգոր Աբգեպիսկոպոսին. այսու պայմանաւ զի եթէ Աբգեպիսկոպոսին հասուցանիցէ ըստ մերս կամին աւարտ հասուցանիցէ ըստ մերս կամին տալոց եմք նմա անթերի զգրուածս մեր՝ մաց տալոց եմք նմա անթերի զգրուածս մեր՝ ապա թէ ոչ՝ և մեք ոչ ունիմք պարտականութիւն այլոց ուրուք։ Որպէս Եփրեմն վասն Դանիէլին զՈ. թուման ընդ վայր խարճ է արարեալ։ տեղւոյս որպիսութիւնն այսպէս գիտեա՝ զի ինքնահաճ վախճականս այս՝ ի հալածական լինելն ի սրբոյ Աթոռոյդ բերեալ է ընդ իւր գոզութեամբ՝ զմի մեծ կուժ սրբալոյս մեռոնն անգիտելի ի ձէնջ՝ և ասէ գրեալ առ Դանիէլ վարդապետն թէ մեռոնն ընդ իս բերեալ ունիմ. զու այդի գրեա առ քաղաքացիսս՝ զկնդակ առաջնորդական և նուիրականաւ լանուամբ մերով՝ և չգնա աստ զի տեսցեն և իմասցեն թէ՝ ի քէն եմք հաստատեալ՝ վասն որոյ և նորա գրեալ՝ առաքեալ էր ասէ՝ զոր չանցեալ կիրակէին ընծեռնուլ ես վանքի եկեղեցւոյս

և փիլոյէնց չանեն։ այլ մեք զայս ունելք գրել Տէրութեանդ մեծի՝ թէ զիարդ՝ անգիտելի ի ձէնջ զմիւռոնն սուրբ ալսպիսիքս գոզանան և յօտար տեղիս չբջնցուցանեն. ոչ ապաքէն սա՝ ձեռամբ անհաւատարիմ լուսաբարացդ լինի՝ և եթէ այս այսպէս՝ ապա զինչ թողուն զոր ոչ առնեն. զինչ և իցէ խնդրելոք զդուշ մնալ ի կեղծաւորիւ ապանց։ զայս ևս գիտասցէ տէրդ մեր զի վասըն առաջին գրելացն մերոց զոր յայտնի է ձեզ՝ փութ կալչիք զի կատարումն սայցէք խնդրանաց սոցա՝ և այն՝ որպէս և գրեալ ես սոցա զերկուս խնդիրս զորին՝ հաստատեան ի սոցանէ ձեռագրով. և ապա որքան հնար է փութացայ ի հաշտութիւն՝ զի կատարումն բանին մերոյ ի գմանէ կալեալ երեւի. և սոքա եւս մեծաւ յուսով են՝ զոր ոչ ինչ կարեն յեաս կալել վասն բանին մերոյ եւ յուսամք որ յանձն առեալ կատարելոց են զխնդիր մեր՝ եւ որպէս լինի գրեալ ծանուցանելոց եմք. առ այժմ այսքան։ վանքի տէր Յոհաննէսին, տէր Սիմոնին, Մեհրաք ազային եւ Պաստա. մէնց պարոն Սահիանին յատուկ յատուկ՝ օրհնութեան եւ յանձնարարական թուղթ գրեսցես՝ եւ այն գրեալ ձեռագրին մեք Սօղոմոնին այնպէս խորհեցաք եւ դու որպէս հաճիք՝ այնպէս գրեսջիք զի ըստ գրեցելոցդ արասցուք։ Յովհաննէս գիւանըն հոգւով չափ չանայ ի գլուխ տանել զասացեալս մեր՝ տեսցուք թէ՝ որպէս լինի։ վասն Հնդու նուիրակ Ցակոբ վարդապետին այսպէս սուտ համբաւեն ասա թէ՝ հանդերձ բեռամբքն ի վերայ Սալմասու է դնացեալ առ Պանիէլն՝ եւ այլ այսպիսի սուտ համբաւք չասս։ Յովակիմ տղայն յլես առ մեզ որ չասս հարկաւոր է՝ ըստ որում թարց տղայի եմք մնացեալ՝ եթէ գնամք ընդ մեզ տանելոց եմք՝ եւ եթէ զամք ընդ մեզ բերցուք։

որ մնամք մեծի Սրբազնութեան ձերոյ՝ մշտապատրաստ ծառայք ԳԱԲՐԻԵԼ և ՍԱՐԳԻՍ անարժան սեւսուրք։

ի 1251ին. եւ Մայիսի 18ին
ի Թիֆլիզ։

---

## ՀԸ. Թուղթ Իվանէ Սարղսարի Օրբէլեան առ Դաւիթ կաթողիկոս (?)

Շնորհազարդ և Սրբազնասուրբ ᴿᴿᴿ տէտ ամենայն Հայոց,

Ողորմած Տէր եւ Թագաւոր։

Ջօրհնալիր և ղչնորհածօրան նամակ սըրբազնասրբութեանդ, ընկալաք ուրախութեամբ և զամենայն հրամայեալդ ծանեաք լիովին. որոյ ուրախութեամբ լցեալ գոն մատուցաք բարերարին Աստուծոյ և խնդրեցաք կեանս երկար եւ յաջողակս ողորմած Տեառնդ. եւ երդմամբ հաւատացուցանեմք տեառնդ մերոյ, որպէս զի ի նախնեաց մերոց սկսեալ մինչ ցարդ հաւատարիմ լեալ եմք սրբոյ Աթոռոյդ եւ. գահակալաց գորին. այժմուս ևս առաւել գլխովին ջան եղեալ, ջանամք սակս հարատաւութեան ծառայելոյ Տեառնդ մերոյ. որքան կարն մեր է. մինչ ցկէն չնչոյ մերոյ. թէ աստ եւ թէ ուր ուրեք պատահեսցուք։

Ջայս եւս յայտնեմք տեառնդ մերոյ. եւ բարեկամաբար իրր մասլահաթ տեսանեմք, զի այսպէս պատահեցաւ որ մեք երկուքս էլ, ընդ կնօրինին երթամք ի դուռն ողորմածա-
զունիդ կայսերն, և մեք որքան կարն մեր է անդանօր ջանալոց եմք ի գործս մեծամեծ սակս հաստատութեան Տեառնդ, մեք խելքաթ տեսաք և ծանուցանեմք Տեառնդ՝ եթէ տէրութեանդ ևս հաճոյ լիցի մին փոքր թուղթ նորին զերազանցութեան մեծ վէզիրին գրեսցես զամենայն յանցանս քոյ գրելով. մեք զնետ մեր տարեալ ջանասցուք ի կատար հասուցանել զխնդիրս ձեր. և եթէ կարելի լիցի երկու հատ զար հաշիւ բութաղար չէր ըստ իրեանն արժանւոյն գտեալ լըցեսցես ի ձեռս կնեալ Սօղոմոնին, որ ի քէն չնորհեալ իրր սիրոյ նշան ընծայ տարցուք նմա, չատ բարի լինի. խնդրեմք այս խորհրդեանս հաճեսցի սիրտ Տեառնդ զի բարւոք լինելոց է. այսպիսի ժամանակին մի հալիր խնայելով, զի մեք զօգուտն Տեառնդ կամելով՝ այսպիսի խորհուրդ խորհեցաք, կամք Տէրութեանդ է։

Ջայս ևս որդիական համարձակութեամբ զրեմք և խնդրեմք ողորմած Տեառնէդ, զի մեք տեղս բաղումս ջանացեալ որոնեցաք գրամով և ոչ գտաք, վասնորոյ որդիական համարձակութեամբ խնդրեմք, զի ամենեցունցս երկու հատ զար հաշիւ բութաղար արդարև չէր չնորհեսցես, մեզ, զի ընդ մեր տարցուք, որ յոյժ հարկաւոր է մեզ, և ատ ոչ գտաք. եւ առ տէրութիւնդ զմեզ ի կեանըս մեր պարտաւոր առնես. և զհատատարմական ծառայութիւնն մեր աստուծով լսելոց ևս ի գրութենէ բարեկամացն քոց. աստուծով եթէ կատարես զխնդիրս յոյժ բարի է. եթէ ոչ կամք տեառնդ է, մեք ևս ի կեանըս մեր հաւատարմապէս ծառայելոյ պատրաստ եմք անվերջանալի մինչ ցմահ։

Համարձակութեան մերոյ ներումն խնդրելով զօրհնալիր նամակ սրբազնասրբութեանդ անպակաս արասցես ի յուրախութիւն սրտի մերոյ։

որ եմք սրբազնութեանդ ա-
մենախոնարհ ծառայ ԻՎԱՆԷ
ՍԱՐԳԱՐ ՕՐԲԵԼԵԱՆ և ՍՕԼՕՄԱՆ
ՄԷՀԹԱՐ ԹԱՐԹԱՆԵԱՆ

1802 Թուին
Մայիսի 18ին
Թիֆլիզ

---

## ՀԹ. Հրովարտակ կայսեր Ռուսաց առ Դանիէլ կաթողիկոս *)

Թարգմանութիւն Պարզապէսն և մեծի հրովարտակին նորին կայսերականի մեծութեան, որ առ Դանիէլ Պատրիարգն ամենայն Հայոց

Ատուծով արագասյ Ողորմութեամբն մեք Աղէքսանդր Առաջին կայսր, և ինքնակալ ամենայն ռուսաց. Մոսկովու՝ Գիովու՝ Վլադիմիրու՝ Նովգորոդու. Արքայ Ղազանու. արքայ Աստրախանու. Արքայ Սիպիրու. Արքայ Խերսոնու. Դաւրիու. Թագաւոր Պագովու, և մեծ իշխան Սմոլենսկու՝ Լիտվսկու՝ Վօլինսկու՝ և Պոտօլսկու. իշխան Էսթլանտու՝ Լիֆլանտիու՝ Կալանտիու և Ակմիղատու՝ Լիվսկու՝ Սամօդիցու՝ Կօրէլու Թվէրու՝ Իւգորսկու՝ Բեռմու՝ Վեացկու՝ Պօլղարու և այլոց։ Թագաւոր և մեծ իշխան Նովգորոդ Նիզովու երկրին. Չերնիգովու՝ Րիազանու. Պօլոցկու՝ Րոստովու, Եարոսլաւու, Պելօզէրու, Ուդորու. Օպդորու, Կօնդիսկու. Վիտեպսկու. Մստիսլաւսյ, և համայն հիւսիսային կողմանց, տիրապետող և թագաւոր Իվերու՝ Կարթալինու՝ վրաց և կապարդինու, երկրին Չերքեզաց և լեռնական իշխանաց և այլոց ժառանգաւոր՝ թագաւոր՝ և իշխող. ժառանգ Նորվեգու։ Գոթոց. Ղերցոզ. Շլեզվիգ. Գօլստինու. Օլդոմարնու. Թիթմարսեհնու և Օլէնբուրգու թագաւոր ևվերիու, և այլոց, և այլոց, և այլոց.

Գերապատիւ Գանիէլ Պատրիարգին և այլոց ամենից պատուաւոր մելիքաց իշխանից և կառավարչաց և ամենայն հայոց պատուելի Ազգին մեր կայսերական ողորմութիւն և չնորհաւորումն։

Ցայտ առնեմք այսու մերս ողորմութեան մեծ հրովարտակաւն. զի Գանիէլ պատրիարգն ամենայն հայոց ի ձեռն ի կայսերութեան մերում եղեալ առաջնորդ Եփրեմ Արքեպիսկոպոսին իւրոյ ամենախոնարհաբար գըրով խնդրեալ էր ի մէնջ զի չնորհեսցուք նոյն պատրիարգին զմերս կայսերական մեծ հրովարտակ. զոր ընկալեալ լիցի պահպանեալ ի առաջարի Աթոռոյն նորա էջմիածնի, վասն յաւիտենական լիչատակի ողորմութեան և բարեհաճութեան մերոյ։—Ջի որպէս յառաջ քան զայս բարձրագոյն նախնիքըն մեր երանելի և յաւիտենական փառօքն արժանաւորք նոցին մեծութիւնք լինքնակալ կայսր և թագաւոր մեծն Պետրոս, և թագուհի և կայսրուհի Եկատերինէ առաջնեւորդն. նոյնպէս թագուհի և կայսրուհի Եկատերինէ երկրորդն, և սիրելագոյն ծնօղն մեր թագաւոր և կայսր Պաւել Պետրովիչն զպատուելի ազգն հայոց յաղագս քրիստոնէութեան ենթ յատուկ կայսերական ողորմութեան իւրեանց պահպանեալ բարեհաճեցան, վասն որոյ հրովարտակքն որ ի մեծութենէ նոցա՝ առաքեցեալք են, այսինքն յամի Տեառն 1724—ի 1726 ի 1768, ի 1798 և ի 1800 թուոջ առ այն ժամանակի եղեալ եպսկոպոսի, Ներսէս, Սիմէոն, Ղուկաս և Յովսէփ պատրիարգացն հայոց, նաև մելիքաց՝ իւրաքանչիւր կառավարչաց և ամենայն հայոց պատուելի ազգին յայտնի է եղեալ։ Նոյնպէս և մեք հետեւելով յիշեալ բարձրագոյն նախնիքըն մերոց հաւատարպէս բարեհաճեցաք զներկայ Գերապատիւ Գանիէլ Պատրիարգ. նոյնպէս և յապագայ յաջորդսն նորին Պատրիարգութեան Աթոռոց և մելիքսն՝ իւրաքանչիւր

*) Տպում ենք նոյնութեամբ, ինչպիսին էր հայերէն օրինակը.

չին կառավարիչն և համայն պատուելի ազգին հայոց պահպանել ի ներքոյ մերս կայսերական ողորմութեան՝ չնորհի և խնամոց։ Նաև համառաձ եմք մեք լիշեալ Դանիէլ Պատրիարգին, և զկնի նորին Պատրիարգութեան Աթոռոյն ժառանգորդ փոխանորդացն զի բնականալքն ի մեր Բուսաց կայսերութեան երկրի եղեալ ազգն հայոց, որք են իւրեանց դաւանութեանն հոգևորական կանոնիւ և եկեղեցական կարգաւ, ունելի ի ներքոյ կարգադրութեան իւրոյ. նոյնպէս որպէս յառաջ եղեալ է վասն որոյ երբ խնդիր լիցի ի ստացանէ առաքել առ ինքեանս հայոց արքեպիսկոպոս և կամ այլ հոգևոր կարգաւոր վրկայական գրով Պատրիարգին. զի առանց նորին վկայական գրոյն ի ներս մերս կայսերական տէրութեանս ոչ են ընկալելոց. ուստի ի մէնջ հրովարտակաւ պատուիրեալ է կարգեցեալ կուսակալաց որք են ի սահմանս մեր։ Այլ և մեք ամենայնիւ յուսադրեմք լիշեալ գերապատուելի Դանիէլ Պատրիարգին՝ պատուելի մելիքաց՝ լուպաշաց՝ կառավարչաց և ամենայն հայոց և մանաւանդ առաւել ևս, որք են ընդ հովանեաւ կայսերութեանս Բուսաց պահել ի ներքոյ մերոյ բարձրագոյն ողորմութեան և հովանաւորութեան։

Տրեցեալ եղև ի Ս. Պետերբուրգ Մերով մեծ կնքով

Ամի Տեառն 1802 մայիսի 19.

## 2. Թուղթ միաբանից ս. Էջմիածնի առ Պատրիարքն Գ. Պօլսոյ.

Զարդարեալ երկնաճիր պարգևօք սուրբ հոգւոյն չնորհազարդ Աբրք Եպիսկոպոսի և վեհելուչ Պատրիարգի մեծի քաղաքիդ Կոստանդնուպօլսոյ և այլ չնորհափայլ Աբրք Եպիսկոպոսաց՝ հանճարեղ վարդապետաց սրբանուէր քահանայից և այլ եկեղեցական աստիճանաւորաց. նաև գերամեծար Ամիրալից լարգելի իշխանապետաց և իշխանաց և բոլոր մերայինն ժողովրդոց՝ ողջոյն սիրոյ և լարգանաց մատուցանեմք. խոնարհ պաչոնանալք Քրիստոսի միաբանք Էջմիածնի։

Ի տան և եօթն ապրիլի գրեալ Թղթով մերով լուսամբ թէ տեղեկացեալ լիցիք վշտացին անցից որք անցին գմեօք և զիտացեալ զամենայն տառապակրութիւնս մեր. վասն որոյ այսու Թղթով կամիմք զալ իւս ծանուցանել. Արդ լայտ է յարգելեացդ մերոց, թէ յաւուրս բռնաւորութեան իւրոյ բարբարոս այս զեղծեայ և աղաւաղեաց զամենայն բարեկարգութիւն միաբանութեանս մեր և ազգին իսկ։ Քանզի չունի զճշմարտութիւն ի ձեռին իւրում լինիլ ի նա ապաստան. այլ միայն ապաւինեալ ի խաղն և ի հնարս չարութեան, առնէ լրբաբար զոր ինչ և առնէ։ Նմին իրի ի ձեռն խանին բռնացեալ ի վերայ մեր՝ գործակից իւրն չարութեան ջանայ առնել զմեզ. ոչ թէ միայն ինքն հակառակ կացեալ ճշմարտութեան՝ զդաւն քաղցր ասէ և զքաղցրն դառն և ժառանգէ զայն ըստ մարգարէին, այլ և զմեզ բռնութեամբ ի նոյն հրաւիրէ։ Վիճէք զուք ի գրուածոց բազմաց՝ թէ ի դիմաց միաբանից տաճկական խնթիրամ 24) գրեալ բռնութեամբ կնքել եաս, եթէ ոք ի մէնջ խալիֆալի հրամանն չառնու յանձն կատարել՝ զմօրուս նորա գերծգին և խանին հարիւր թուման տուժեսցի. եթէ ոք փախիցէ՝ զայս պատիժ հատուսցեն լըմբռնիլն նորա և ի սենեակս եղեալ ինչքն իւր խանին եղիցի բոլորովին։ Բայց ի գրոյս յայտնէ՝ զոր էառ ի հասարակաց. էառ և յաւուկ գիր մի Աստուածատուր և ի Բարսեղ Աբրք եպիսկոպոսաց, եթէ հակառակ գոյին սոքա ինքեան՝ իւրաքանչիւրքն հինգ հարիւր թումէն տուժեսցեն։ Եւ զկնի յաւելուլ զբռնութիւնն իւր՝ ի գլխոց միաբանիցն զբանագրանս գրել եաս առ փախագնելն հոգւոց մերոց ... և հրաւիրելոց է զմեզ ի կնքել. ոչ գիտեմք զինչ արասցուք մտատանջեալ խորհիմք, ոչ կարեմք զելս իրացն գտանել. եթէ կնքեմք՝ հակառակ գտանիմք Աստուծոյ և կանոնաց սրբոց հարց և անձամբ զանձինս մեր նզովեալ բանիւ առնեմք զմեզ. զի գիտեմք ի կանոնաց, թէ ընդունային բանագրանք և նզովք ոչինչ ներգործեալ յանձն անմեղ՝ զառնայ ի բանագրօղն. որպէս նետ ձգեալ ի վէմ կարծր՝ դառնայ անդձելի ի ձգօղն։

Ապա եթէ ոչ կնքեմք՝ անչուշտ գիտեմք, թէ զի վերոյգրեալ պատիժն կրելոց եմք. բայց գիտասջիք զայս՝ եթէ հնար եղիցի՝ ընդպիմացեալ ոչ կնքեմք. ապա թէ ոչ, ակամայ և բռնութեամբ կնքել հաւարեսջիք. վասն զի ոչ կարեմք հրամանի սորա կալ ընդդէմ երդէք. եթէ իրաւի իցէ հրամանն և կամ անիրաւ. զի մահ և կեանք մեր ի ձեռին սորա են. կամի կեցուցանել, և կամի կորուսանել. եթէ ծանր ծանր լանցանս բարուրանօք բարդեսցէ ի բերալ մեր և ի թղթի արձանացուցեալ հրաւիրեսցէ ի կնքել ոչ կարեմք քացասել։ Նմին իրի և ձեզ պարտ է լետ այսորիկ ըստ կամս սորա կնքեալ թուղթսն մեր սուտ և ունայնութիւն համարիլ որչափ և պատահեսցին. զի ստութեամբ գրեալ և բռնութեամբ կնքել տայ։ Իսկ վասն բանագրանացն սորա այսպէս գիտասջիք զի չունի սա իրաւունս բռնադատելոյ զոք եթէ ոչ միայն օրինաւոր հայրապետն ազգի մերոյ ..., այլ և լեռին աղբատն ևս վասն բազում պատճառաց. նախ զի ինքն մերժեալ է յաղգէն և ընկեցեալ լիշխանութենէ. ապա ոչ կարէ բանիւ առնել զոք գոնէ և ոչ զօրինացն. զի եթէ արասցէ չէ ընդունելի. և բանագրեալն այն չէ գրկեալ յեկեղեցական հաղորդակցութենէ։ Երկրորդ զի ինքն սրբասիրէ և սիմոնական գոլով՝ ինքնին բանագրեալ և նզովեալ է ի նախնի սրբոց հարց և սրբազան ժողովոց. ապա զայլս ոչ կարէ բանագրել։ Երրորդ՝ բանիւ եղեալ և նզովեալ է սա ի միաբանութենէս մերմէ երկից առաջին ի Թղթոյ բոլոր միաբանութեանս մերոյ՝ զոր կնքեալ եմք 49 կնքով. և երկրորդն ի Թղթոյ ժ եպիսկոպոսաց, որք գրեցին յերևան քաղաքի՝ չապարանս խանին ... հայրապետն մեր գիտէք ամենեքեան թէ է առնախանձու և վասն ախտին իւրոյ. զայսպիսի բանագանս եթէ օրինաւոր հայրապետ և կամ եպիսկոպոս ոք գրեսցէ, տակաւին անընդունակ է ըստ նիկիական հինգերորդ կանոնին. ապա ծուր մնալ բանագրանք ապօրինաւոր առնս այսորիկ. զի գրի ի հինգերորդ կանոնի անդ. եթէ ի խստութենէ և ի չար նախանձէ բանիւ եղեալ և մերժեալ իցէ ոք, առ այնպիսին մարգասիրութիւն արասցեն և այլն։

Հինգերորդ՝ ըստ վարդապետաց անընդունակ է բանագրանքն՝ եթէ չիցէ վասն հրապարակական մահացու մեղաց. զի ուր չեն մեղք և ոչ առնի նզովից. զի այնպիսի նզովք առ նզովօղն դառնայ ըստ բանին։



ներոյդ կանոնի լուսաւորչին, թէ որ վայրապարն նզովէ, նզովեալ եղիցի։ զնուսկն ասացեալ. զօրինութիւն և զանէծ բարբարոսիս այսորիկ՝ պարտ է ձեզ համարիլ ախտաւոր մտաց աղճատեալ ծնունդ և իբրև զբաջամուն մոլեգնելոց զի չիք ի սմա հոգի Աստուածային. այլ զինչ և գործէ, զիւական հոգւով գործէ։ Ապա ազաչեմք ամենեքեան աղաւեցէք զմեզ ի բռնութենէ սորա. զի զօր հանապազ տառապիմք և տանջիմք։ Զայս ևս գիտասջիք զի կամք է մեզ ամենեցունցս ի տէրութեան օսմանցւոց Կաթուղիկոսական Աթոռ հաստատել՝ օծցի և նստցի անդ օրինաւոր սրբազան հայրապետն մեր և զդործ հայրապետութեան իւրոյ կատարեսցէ սրբագործելով զմեռեալն և այլն։ Եթէ յաջողեսցէ աէր՝ բերևմք զնա պատուով ի սուրբ Աթոռս և կամ մեք խոյս տուեալ՝ զնամք առ նա. ապա թէ ոչ՝ մեք միաոյցաք ի գերութեան և ի ծառայութեան աստ. զուք միայն թէ զչնորհս սրբոյ հոգւոյն ի ձեռն օրինաւոր հայրապետի վայելեցէք. հետևելով ճչմարտութեան լիրաք ազգ երկար կենօք զօրացեալ ի ատր ի պարծանս և ի ցնծութիւն ստորակնքօզաց թղթոյս։ Միաբանք ամենեքեան ջատագով են ճշմարտութեան և համաձայն ընդ մեզ (բաց ի չորից անձանց) այլ առ երկիւղիւ չկարացին գնել կնիք ի Թղթի այսմիկ. զի թէ ի ձեռն անկցի այս Թուղթ՝ մնձի վանգի լինի պատճառ ստորակնքողաց զրելթէ և մահու իսկ։ Նաև միաբանք արացը զրելթէ ի մահու իսկ։ Նաև միաբանք արաքին վանորէից ճշմարտութեան են ջատագովք. բայց ոչ ոք ի նոցանէ կարէ գալ առ մեզ և ոչ ի մէնջ ոք գնալ կարէ առ նոսա. վանորայ չեզև կարելի նոցա գնել կնիք ի Թղթի յայսմիկ. Իսկ չորք անձինքն վայրենաբարուք գոլով՝ առաւել զպարարտութենէ պտղոց իւրեանց հոգան քան թէ զբարեկարգութենէ ազգին, որոց զանուանն ոչ լիչատակելոյ արժան համարիմ ասել. և այսչափ գրեցաւ։ Եւ ի մայիսի 20.

Գրեցաւ 1802. և ի մայիսի 20.

ի չնորհատուր սուրբ Աթոռս Էջմիածին։

